ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՆՏՈՆՅԱՆ Ս. Ա.

Հայ հասարակության զարգացման արդի փուլում, սոցիալ-տնտեսական և արժեքային ճգնաժամի պայմաններում հաճախ ենք առնչվում նյութապես և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների սոցիալական ինտեգրման հիմնախնդրին, քանի որ անձի սոցիալականացումը էապես պայմանավորված է ընտանիքի սոցիալական և տնտեսական կարգավիճակով:

Սոցիալ-տնտեսական ցածր կարգավիճակ ունեցող և աղքատ է համարվում այն ընտանիքը, որի եկամտի մակարդակն ու կենցաղային պայմանների որակը ցածր են սահմանված չափանիշներից, որի հետևանքով ընտանիքը չի կարողանում բավարարել սննդի, հագուստի և այլ նյութական պահանջմունքները[1]:

Համաձայն 2013 թ. դեկտեմբերի 12-ին ընդունված "Պետական նպաստների մասին" ՀՀ օրենքի 2-րդ գլխի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝ ընտանիքի անապահովության աստիճանը գնահատվում է ընտանիքի անապահովության բնութագրիչների՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտ, ընտանիքի կազմ, ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական վիճակ, և այլ պայմանների հիման վրա[2]:

Հասարակության սոցիալական և նյութական բևեռացումը ակներև է դարձնում անապահով խավի առանձնացումը՝ որպես հասարակության բարոյա-հոգեբանական զարգացման խոցելի կողմի: Նյութական և սոցիալական պահանջմունքների դեպրիվացիան նպաստում է այս անձանց մեջ համապատասխան հոգեբանական առանձնահատկությունների զարգացմանը: Որպես անապահով խմբի ներկայացուցիչ՝ նրանք առանձնանում են նաև իրենց հոգեբանական նկարագրով:

Հասկանալու համար սոցիալապես և նյութապես անապահով խմբի երեխաների դերը հասարակության զարգացման ընթացքում անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց հոգեբանական առանձնահատկությունները, կազմել հոգեբանական բնութագիրը: Այս երեխաների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների հետազոտումը, հոգեբանական նկարագրի վերլուծությունը հնարավորություն կտան նրանց համար ստեղծելու զարգացման համապատասխան կրթական և սոցիալական պայմաններ, ինչպես նաև հիմք կծառայեն հոգեշտկողական աշխատանքների մշակման և իրականացման համար:

---

[1] *Տե՛ս* **Галагузова М.А.** *Социальная педагогика, М., 2000:*

[2] *Տե՛ս Պետական նպաստների մասին ՀՀ օրենք,* http://www.arlis.am/documentview.aspx? docid=94822

Նյութապես անապահով ընտանիքները դասվում են անբարեկեցիկ ընտանիքների շարքին և, ինչպես մյուս անբարեկեցիկ համարվող ընտանիքները (օրինակ՝ հոգեպես կամ ֆիզիկապես ոչ առողջ անդամ ունեցող, հակասոցիալական վարք դրսևորող, ոչ կառուցողական, կազմաքանդող փոխհարաբերություններով ընտանիքները)[3], բնորոշվում են իրենց հոգեբանական առանձնահատկություններով ու վարքային դրսևորումներով[4]:

Անբարեկեցիկ ընտանիքների անդամներին հատուկ են վարքային տարբեր խանգարումներ՝ ագրեսիվություն, մուրացկանություն, գողություն, հակահասարակական վարքի ձևեր, մեծահասակների նկատողություններին ոչ համարժեք հակազդումներ և այլն: Այդ երեխաների շրջանում հիմնականում դիտարկվում են կրթական ցածր առաջադիմություն, անձնական հիգիենայի հմտությունների բացակայություն, ներասթենիա, հոգեկան անհավասարակշռություն, դեռահասային հարբեցողություն, շփման խանգարումներ՝ հասակակիցների և մանկավարժների հետ կոնֆլիկտայնություն, հարազատների հետ սոցիալական կապերի խանգարումներ, քրեածին խմբավորումների հետ շփումներ, գերակտիվություն և այլն[5]:

Հոգեբանական գրականության մեջ մասնավորապես քիչ են նյութապես և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հոգեբանական բնութագրերի ուսումնասիրմանը նվիրված հետազոտությունները: Ուստի, նկատելով վերոնշյալ խնդրի կարևորությունը, նպատակ դրվեց հետազոտել անապահով ընտանիքների երեխաների հոգեբանական առանձնահատկությունները, որն էլ հիմք կծառայի նրանց հոգեբանական բնութագիրը կազմելու համար:

Հետազոտությանը մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հաշվառված անապահով ընտանիքների 6-15 տարեկան 75 երեխա, որոնք կրթությունը ստանում են հատուկ դպրոցներում:

Երեխաների հոգեբանական հետազոտությունն իրականացվել է հետևյալ ոլորտներով՝

- *հուզակամային ոլորտ,*
- *շփման-հաղորդակցման ոլորտ,*
- *վարքային ոլորտ,*
- *ինքնաընկալման ոլորտ:*

Երեխաների հուզակամային առանձնահատկությունների հետազոտման համար ընտրվել է Տեմմլ-Դորկի «Տագնապայնության թեստ» պրոյեկտիվ մեթոդիկան:

---

[3] *Տե՛ս* **Стурлис Т.К.** *Социально-педагогическая работа с детьми из неблагополучных семей (Социально-педагогическая работа, 2002, № 5, с. 59-63):*

[4] *Տե՛ս* **Целуйко В.М.** *Психология неблагополучной семьи, М., 2003:*

[5] *Տե՛ս* **Новикова Ю.А.** *Особенности воспитания в неблагополучных семьях (Молодой ученый, 2014, № 2, с. 84-86):*

Շփման հմտությունների և վարքային դրսևորումների հետազոտման նպատակով կիրառվել են Ռենե Ժիլի «Միջանձնային հարաբերությունների համակարգում կոնֆլիկտային ոլորտների բացահայտում», «ՆԱԹ», «Ձեռք» պրոյեկտիվ մեթոդիկաները:

Ինքնաընկալման ոլորտն ուսումնասիրելու համար կիրառվել է «Գոյություն չունեցող կենդանի» մեթոդիկան:

Այժմ անդրադառնանք հետազոտության տվյալների վերլուծությանը:

Ըստ Տեմմլ-Դորկի «Տագնապայնության թեստ» մեթոդիկայի տվյալների վերլուծության՝ երեխաներից 68-ի մեջ բացահայտվեց տագնապայնության բարձր արտահայտվածություն:

Նկարային իրավիճակները մեկնաբանելիս երեխաները հաճախ էին հնչեցնում հետևյալ արտահայտությունները.

- **«կոշիկները ծակ են» կամ «կոշիկները կեղտոտ են, մաշված են, դրա համար է երեխան տխուր».**
- **«նրա հետ ոչ ոք չի խաղում, փախչում են իրենից, չեն խոսում իր հետ», «նեղացել է, որ իրեն բանի տեղ չեն դնում», «իր հետ ոչ ոք չկա, մենակ է, դրա համար է տխուր».**
- **«մայրիկն ու հայրիկը տխուր են», «հայրիկը իրեն փակում է քարերով», «տանը ուրախանալու բան չկա, դրա համար է տխուր»:**

Տվյալների որակական վերլուծությունը ցույց տվեց, որ տագնապայնությունը գլխավորապես պայմանավորված էր սոցիալական, նյութական անապահովության և ինտեգրման խնդիրներով, ընտանեկան ոլորտում անբավարարվածության զգացումով, ծնող-երեխա ոչ ներդաշնակ փոխհարաբերություններով:

Ռ. Ժիլի «Միջանձնային հարաբերությունների համակարգում կոնֆլիկտային ոլորտների բացահայտում» մեթոդիկայի տվյալների վերլուծությունը վեր հանեց հետազոտվողների մեջ առկա շփման խնդիրները. ըստ այդմ՝ նրանք բաժանվեցին 2 խմբի:

Մասնակիցներից 36-ի մեջ (I խումբ) բացահայտվեցին մեկուսացվածություն, շրջապատի կողմից անտարբերության զգացում, ընկերների նեղ շրջանակ կամ բացակայություն, ցածր շփվողականություն, ենթարկվելու հակում, թույլ հուզական կապ ընտանիքի անդամների հետ. դա էին վկայում նկարային իրավիճակներում նրանց տեղակայման մատնանշումն ու մեկնաբանությունները:

Այս երեխաները նկարային իրավիճակներում իրենց մատնանշում էին ընտանիքի անդամներից և հասակակիցներից մեկուսի, միայնակ և պատասխանում էին, որ իրենց հետ ոչ ոք չի ցանկանում շփվել, իրենց համարում են կեղտոտ, տգեղ, արհամարհում են և այլն: Կոնֆլիկտային իրավիճակներում նրանց հակազդումներն էին վիրավորվածության զգացումը, նեղացկոտությունը, լացը, հակազդելու անկարողությունը:

Այս խմբի երեխաների հետ «ՆԱԹ», «Ձեռք» պրոյեկտիվ մեթոդիկաները կիրառելիս պարզ դարձավ, որ նրանց մեջ թույլ են արտահայտված ինքնապաշտպանական հմտությունները, իրենց զգում են ենթարկվողի դերում, ընկճված են, բնորոշվում են անապահովության, անօգնականության, լքվածության զգացումներով, ագրեսիայի արտահայտման մակարդակը ցածր է:

Նրանց արտահայտություններն են.

- ***«ձեռքը ցավում է», «ճկույթը կոտրվել է», «ձեռքը վնասվել է, դեղ է քսում», «ձեռքի երեսին է նայում, ճղվել է»*** *(«Ձեռք» մեթոդիկա),*
- ***«լացում է, նեղացրել են», «նեղացրել են իրեն, թողնում գնում են», «իրեն վիրավորում են, չի պատասխանում»*** *(«ՆԱԹ» մեթոդիկա):*

Իսկ 28 երեխայի շրջանում (II խումբ), ըստ Ռ. Ժիլի «Միջանձնային հարաբերությունների համակարգում կոնֆլիկտային ոլորտների բացահայտում» մեթոդիկայի տվյալների վերլուծության, թեպետ բարձր էր շփվողականությունը, սակայն դիտարկվում էր շփման պահանջմունքի անբավարարվածություն, առկա էր ցանկությունների, հնարավորությունների և հավակնությունների անհամապատասխանություն, նրանք ակտիվ էին, ցանկանում էին ընկերներ ունենալ, ձգտում էին շփման մեջ լինել առաջատար, բարձր էր հետաքրքրասիրության մակարդակը:

Այս երեխաները նկարային իրավիճակներում իրենց ներկայացնում էին կենտրոնական, գերակա դերում, շփման նախընտրությունը տրվում էր հասակակիցներին, նկատվում էր ինքնուրույնության ձգտում ծնողներից, կոնֆլիկտային իրավիճակներում հակազդման հիմնական ձևը խոսքային կամ ֆիզիկական ագրեսիան էր:

*Համաձայն **«ՆԱԹ», «Ձեռք»** պրոյեկտիվ մեթոդիկաների տվյալների՝ II խմբի երեխաների մեջ բացահայտվեցին ըմբոստություն և հակադրվող, ագրեսիվ վարք, բավարարվածություն ագրեսիայից, ասոցիալ վարքի նախանշաններ:*

Այս խմբի երեխաներին նշված մեթոդիկաներով հետազոտելիս հաճախ էինք հանդիպում նման արտահայտությունների.

- ***«դիմացինին զցել է գետնին, ուրախանում է», «ընկերը ընկած է գետնին, չի ուզում օգնի, ուրախանում է», «վատ բան է արել, ծեծում են իրեն», «ծեծում են, ներողություն է խնդրում ծնկաչոք», «չի ուզում իրա ասածը անի, ծեծում է», «ինչոր բան է գողացել, ոստիկանն ընկել է հետևից, որ բռնի»*** *(«ՆԱԹ» մեթոդիկա),*
- ***«այս ձեռքը տանում է, որ բան գողանա», «այս ձեռքը հարվածում է, որովհետև բան է գողացել», «բռունցք է արել, հարվածում է»*** *(«Ձեռք» մեթոդիկա):*

Ե՛վ I, և՛ II խմբի հետազոտվողները հաճախ էին գործածում «հայրիկը ծեծել է», «մայրիկը ապտակել է, հարվածել է» և այլ նմանատիպ արտահայտություններ:

«Գոյություն չունեցող կենդանի» մեթոդիկայի տվյալների վերլուծությունը թույլ տվեց բացահայտել ցածր ինքնագնահատականի, սոցիալական հարմարման խնդիրների առկայությունը 65 հետազոտվողների շրջանում:

Ներկայացնենք ***«Գոյություն չունեցող կենդանի» պրոյեկտիվ մեթոդիկայի*** *որոշ ուշագրավ նկարագրություններ, որոնք ընդհանուր գծերով բնորոշ են անապահով ընտանիքների երեխաներին:*

13 տարեկան տղան «գոյություն չունեցող կենդանուն» նկարագրում էր այսպես. ***«Կենդանու անունը «Փուֆիկ է», ապրում է ուրիշ մոլորակում, շուրջը ոչ ոք չկա, թիթեռների հետ է ապրում, փայտ է ուտում: Ինքը կորել է, ուզում է գնալ ծնողների մոտ, մոլորակից նրան դուրս են շպրտել, աքսորել են: Կենդանին շատ է վախենում մարդկանցից, գողերից»:***

Ներկայացնենք նաև 15-ամյա տղայի վերլուծությունը. ***«Կենդանու անունը «Յախք» է, ապրում է տիեզերքում, ոչինչ չկա շուրջը, մենակ է, սնվում է հողով, ամենամեծ ցանկությունը ընկերներ ունենալն է, տիեզերքում է ծնվել, դրա համար էլ ընկերներ չունի, չի կարողանում այնտեղից գալ երկիր, որ ընկերներ ունենա, բայց եթե գա էլ, իրենից կվախենան, որովհետև շատ տգեղ է»:***

Վերոնշյալ վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ անբավարարվածությունը սեփական սոցիալական դերով այս երեխաների մեջ ձևավորում է թերարժեքության զգացում, սոցիալական կարգավիճակը հիմք է դառնում համապատասխան հոգեբանական առանձնահատկությունների զարգացման համար:

Ըստ առկա սոցիալական իրավիճակի՝ երեխաների հոգեբանական զարգացումն ընթանում է 2 ուղով՝ կա՛մ հարմարվում է իր դերին, միաձուլվում նրա հետ, կա՛մ հակադրվում է՝ դուրս գալով իր սոցիալական կարգավիճակի դեմ: Հետևաբար, հետազոտության տվյալների վերլուծությունը հնարավորություն տվեց անապահով ընտանիքների երեխաներին, ըստ հոգեբանական առանձնահատկությունների, բաժանելու երկու խմբի:

Առաջին խմբի երեխաները բնորոշվում են տագնապայնության մակարդակի բարձր արտահայտվածությամբ. հատկապես շեշտված են սոցիալական վախերը՝ մերժվածության, ծաղրված լինելու վախը, վախը հասակակիցներից և մեծահասակներից, ֆիզիկական ագրեսիայից: Այս երեխաներին հատուկ է միայնակության, մեկուսացվածության զգացումը, նկատվում է շփման պահանջմունքի անբավարարություն, ընկերների շրջանակը խիստ նեղ է: Ինքնապաշտպանական հմտությունները թույլ են զարգացած, ագրեսիայի դրսևորման մակարդակը ցածր է, նրանք զիջող են, հարմարվող, առավելապես իրենց զգում են ենթարկվողի դերում: Ընդգծված է անապահովության, անինքնավստահության զգացումը, ցածր է ինքնագնահատականը: Այս խմբի երեխաները, հարմարվելով իրենց սոցիալական կարգավիճակին, միաձուլվում են «զոհի» կերպարի հետ և շրջապատի մարդկանցից ակնկալում են համապատասխան վերաբերմունք: Նրանց հաճելի է, երբ հոգ են տանում իրենց մասին, խղճահարության զգացումներ են ունենում իրենց նկատմամբ:

Երկրորդ խմբի երեխաները բարձր տագնապայնությունը համակցում են ագրեսիայի դրսևորման բարձր արտահայտվածությամբ: Նրանց բնորոշ է սահմանի և սոցիալական նորմերի գիտակցման թույլ զգացումը, վարքը բավական ինքնաբուխ է՝ հասնելով մինչև սանձարձակության: Այս երեխաները բնորոշվում են հակադրվող վարքագծով, ընդդիմանում են և չեն ընդունում իրենց սոցիալական կարգավիճակը: Դեմ դուրս գալով հասարակական կանոններին՝ նրանք հաճախ դրսևորում են ասոցիալ վարք: Զարգացած են ինքնապաշտպանական և շփման հմտությունները, սակայն նկատվում է շփման պահանջմունքի անբավարարվածություն: Որպես պաշտպանական մեխանիզմ՝ այս երեխաների մեջ գերակայում է սուտը, արդարացումը: Այս խմբի երեխաները հաճախ են հայտնվում կոնֆլիկտային իրավիճակներում, արտահայտված են միջանձնային կոնֆլիկտները հասակակիցների հետ, դիտարկվում է բավարարվածության զգացում ագրեսիվ դրսևորումներից: Զարգացած են կենցաղային հմտությունները, կողմնորոշումը խնդրահարույց իրավիճակներում: Այս երեխաներին բնորոշ են բարձր ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, վճռականությունը, համառությունը:

Ե՛վ առաջին, և՛ երկրորդ խմբի երեխաները հաճախ բնորոշվում են սոցիալ-մանկավարժական բարձիթողի վիճակով, որը պատճառ է դառնում ուսումնական դժվարությունների առաջացման համար: Անապահով խմբի երեխաների հոգեբանական բնութագրերը առավել ամփոփ ներկայացնում ենք հետևյալ գծանկարի միջոցով.

Գծանկար 1. Անապահով ընտանիքների երեխաների հոգեբանական բնութագրերը

	1-ին խումբ	2-րդ խումբ
Հուզականայի և ոլորտ	տագնապայնության մակարդակի բարձր արտահայտվածություն, սոցիալական վախեր՝ մերժվածության, ծաղրված լինելու վախ, վախ հասակակիցներից և մեծահասակներից, ֆիզիկական ագրեսիայից	բարձր տագնապայնության համակցում ագրեսիայի դրսևորման բարձր արտահայտվածությամբ
Շփման ոլորտ	միայնակության, մեկուսացվածության զգացում, շփման պահանջմունքի անբավարարություն, ընկերների նեղ շրջանակ. բարձր զիջողականություն, հարմարվողականություն	միջանձնային կոնֆլ իկտներ հասակակիցների հետ, բավարարվածության զգացում ագրեսիվ դրսևորումներից. կենցաղային և շփման հմտությունների զարգացման բարձր մակարդակ, կողմնորոշում խնդրահարույց իրավիճակներում. որպես պաշտպանական մեխանիզմ՝ ստի և արդարացման գերակայություն

Վարքային ոլորտ	ինքնապաշտպանական հմտությունների զարգացման և ագրեսիայի արտահայտման ցածր մակարդակ	ինքնապաշտպանական ագրեսիայի բարձր արտահայտվածություն. սահմանի և սոցիալական նորմերի գիտակցման թույլ զգացում, ինքնաբուխ վարք, սանձարձակություն. հակադրվող վարք, ասոցիալ վարքի նախանշաններ
Ինքնաընկալման ոլորտ	անապահովության, անինքնավստահության զգացում, ցածր ինքնագնահատական. որպես հակազդում նկատվում է միաձուլում "զոհի" կերպարի հետ	ցածր ինքնագնահատականը փոխհատուցվում է իշխանության, ուղղորդողի ձգտմամբ, մյուսներին իր կամքը թելադրելու ցանկությամբ

Վերոշարադրյալից բխող ևս մի կարևոր հանգամանք պետք է նկատել. Հայաստանում անապահով ընտանիքների երեխաների մի ստվար զանգված կրթությունն ստանում է հատուկ դպրոցներում՝ չունենալով որևէ ընդգծված հատուկ կարիք, որը հղի է մի շարք վտանգներով: Նախ՝ նման մոտեցումը խոչընդոտում է այս երեխաների ինտեգրացիային հասարակության լայն շերտերում, ապա՝ նման հոգեբանական և սոցիալական խնդիրներ ունեցող անձանց առանձնացումը և շրջափակումը սահմանափակ տարածքում և միջավայրում կարող են նպաստել երեխաների՝ կյանքի նկատմամբ միակողմանի, նեղ և բացասական պատկերացումների ձևավորմանը, արժեհամաստային համակարգում հակահասարակական արժեքների գերակայմանը, այս երեխաների համար չափանիշային են դառնում իրենց փոքր խմբում դրսևորվող վարքի ձևերը, որոնք ոչ միշտ են խրախուսելի: Երեխան աշխարհը տեսնում է իր այդ խմբի կանոնների, նպատակների, վարքաձևերի լույսի ներքո: Նմանատիպ հոգեբանական խնդիրները թեև միավորում են այս երեխաներին, բայց և թույլ չեն տալիս գտնել այդ խնդիրների լուծումները:

Իհարկե, պետք է նկատել, որ հաճախ ծնողները դիմում են այդ քայլին նյութական և սոցիալական տարրական պայմանների բացակայության դեպքում՝ չգիտակցելով դրա հետևանքները: Թերևս ոչ կամածին կերպով նկատվում է այդ երեխաներին հատուկ դպրոցներում մեկուսացնելու և «աղքատի հոգեբանությունը» ամրապնդելու միտում: Ինչպես սոցիալական և նյութական պայմաններն են ձևավորում «աղքատի հոգեբանություն», այնպես էլ անհավասարության զգացումը սոցիալական, կրթական, իրավական և մյուս ոլորտներում: Հաճախ անապահովության նպաստներն ու այլ նյութական օգնությունները, երեխաներին հատուկ դպրոցներում մեկուսացնելը նպաստավոր պայմաններ են ստեղծում անհավասարության զգացման ամրապնդման համար:

Այդ իմաստով, Հայաստանում ներառական կրթության ծրագրի ներմուծումը լուսավոր կետ է այս երեխաների համար, քանի որ, պայմանավորված հուզակամային, վարքային խնդիրներով, խոսքի յուրահատուկ խանգարումներով և մի շարք այլ խնդիրներով, այս երեխաները հաճախ ընդգրկվում են ներառական

կրթական ծրագրում (թեև հարկ է նկատի ունենալ, որ սոցիալական և նյութական անապահովությունը չափանիշ չէ ներառական կրթական ծրագրում ընդգրկվելու համար): Հանրակրթական դպրոցներում նրանց հետ իրականացվում են մանկավարժական և հոգեբանական աշխատանքներ, որոնց նպատակն է ապահովել երեխայի ներառումը սոցիալ-հոգեբանական և կրթական միջավայրերում:

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ հարկ է նշել, որ դպրոցներում անապահով խմբի երեխաների հետ հոգեբանական աշխատանքները ցանկալի է իրականացնել հետևյալ ուղղություններով.

1. Միջանձնային հարաբերությունների կարգավորում, խմբային և հավասարության զգացումի ձևավորում (հավասարության զգացման բացակայությունը այս երեխաների մեջ ներհոգեկան խնդիրների դրսևորման առաջնային պատճառն է: Եվ քանի որ դպրոցահասակ երեխաների առաջատար գործունեությունը ուսումն է, մասնավորապես կարևոր է հավասար պայմանների ստեղծումը կրթական միջավայրում):

2. Հուզական ոլորտի կարգավորում՝ տագնապայնության մակարդակի նվազեցում, սոցիալական վախերի հաղթահարում:

3. Համարժեք ինքնագնահատականի և ինքնաընկալման ձևավորում:

4. Ագրեսիվ վարքի և ասոցիալ վարքային դրսևորումների կանխարգելում:

5. Արժեքային համակարգի և առկա սոցիալական իրավիճակի վերաիմաստավորում:

6. Անապահով կարգավիճակից դուրս գալու անձնային դրդապատճառների ակտիվացում:

Որպես ամփոփում, նշենք, որ ներառական դպրոցներում անապահով ընտանիքների երեխաների հետ իրականացվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների արդյունավետ և նպատակային կազմակերպումը մեծապես կնպաստի ոչ միայն այս երեխաների ներհոգեկան խնդիրների հաղթահարմանը, հասարակության մեջ նրանց ինտեգրմանը, այլև ինչ-որ առումով բարոյապես և հոգեպես առողջ հասարակության ձևավորմանը: Հակառակ դեպքում՝ աղքատության ցուցանիշների աճը, անապահով ընտանիքների թվի հետզհետե ավելացումը նախադրյալ կդառնան սոցիալապես և հոգեբանորեն չհարմարված անդամների թվի բազմապատկմանը, հետևապես՝ բարոյապես խոցելի և թերարժեք հասարակության ձևավորմանը: Եվ, վերջապես, հասարակության մեջ հետզհետե աճող խոցելի շերտերը թելադրող են դառնում հասարակության մշակութային զարգացման և գերակայող արժեհամակարգի ձևավորման գործում:

Կարևորելով հոգեբանամանկավարժական աշխատանքների դերը անապահով ընտանիքների երեխաների սոցիալ-հոգեբանական դժվարությունների հաղթահարման հարցում՝ պետք է նկատել, որ հասարակության մեջ նշված խմբի լիարժեք ինտեգրման համար անհրաժեշտ է նաև պետական հոգածություն և աջակցություն, ներառյալ՝ հավասար կրթական պայմանների և միջավայրի ստեղծում,

անապահով կարգավիճակից դուրս գալու անձնային դրդապատճառների ակտիվացում, համապատասխան աշխատանքային հմտությունների տրամադրում, աշխատանքով ապահովում և այլն:

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ДЕТЕЙ ИЗ НЕОБЕСПЕЧЕННЫХ СЕМЕЙ

АНТОНЯН С. А.

Резюме

Длительная депривация материальных и социальных потребностей у детей из социально и материально необеспеченных семей приводит к развитию у них определенных психологических особенностей. Продуктивная и целенаправленная социально-психологическая работа с этой группой детей не только поможет им решить ряд психологических и внутриличностных проблем, но, в определенном смысле, окажет влияние на формирование психологически здорового общества. В противном случае увеличение числа социально и материально необеспеченных семей будет чревато преумно-жением психологически неадаптированных людей, что, в свою очередь, приведет к формированию морально-неполноценных слоев общества.

THE PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF CHILDREN FROM VULNERABLE FAMILIES

S. ANTONYAN

Abstract

Growing material and social polarization of society unchangeably leads to allocation of vulnerable groups in a separate layer. This situation by itself creates the gap inside moral-psychological development of society. Long deprivation of material and social needs of children from socially and materially vulnerable families leads to the development of their particular psychological characteristics. Productive and purposeful social-psychological work with this group of children will not only help them solve a number of psychological and interpersonal issues, but also will affect the formation of psychologically healthy society. Otherwise, the increase in the number of socially and materialy vulnerable families will be fraught with multiplication of psychologically maladaptive people, which, in its turn, will lead to the development of morally defective levels of society.